2023-2024 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՔՆՆԱԿԱՆ ՆՄՈՒՇ

CONCOURS D'ENTREE 2023-2024

Հասարակագիտություն /Sciences sociales

Իրավագիտության ֆակուլտետ

Faculté de Droit

Temps imparti / Ժամանակը: 2.5 heures / 2.5 ժամ Առաջադրանքի կառուցվածքն ու սկզբունքները

Քննական հարցաթերթը բաղկացած է երեք հատվածներից:

1-ին հատվածում (1-60-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը:

Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր:

2-րդ հատվածում (61-70-րդ հարցեր) պատասխանի տարբերակներով հարցեր են: Պահանջվում է առաջարկված տարբերակներից ընտրել ճիշտ պատասխանը:

Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է երկու միավոր:

3-րդ հատվածում (71-75-րդ հարցեր) բաղադրյալ հարցեր են՝ բաղկացած չորս ենթահարցերից: Պահանջվում է աղյուսակի աջ և ձախ սյունակներում տրված հասկացությունների, երևույթների միջև նշել ճիշտ կապերն ու համապատասխանությունները:

Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասանը՝ չորս միավոր:

Հայաստանում ֆրանսիական համալսարան

Հասարակագիտության ընդունելության քննության հարցարանի տիպային օրինակ

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր: Սխալ պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:		
1.	1. «Կանոնագիրք հայոց» ժողովածուն առաջին անգամ կազմել է.	ա/ Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը բ/ Հովսեփ Վայոցձորեցի կաթողիկոսը գ/ Ներսես Մեծ կաթողիկոսը դ/ Սահակ Պարթև կաթողիկոսը
2.	Մովսեսական օրենքները Հայաստան փոխառնվեցին.	ա/ երրորդ դարում բ/ հինգերորդ դարում գ/ տասնհինգերորդ դարում դ/ տասներորդ դարում
3.	Վարչական իրավախախտումը.	ա/ հանցանք է բ/ զանցանքն է գ/ հանցանք և զանցանք է դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
4.	Ավազակության համար պատասխանատվության տարիքը սկսվում է.	ա/ տասնչորս տարեկանից բ/ տասնվեց տարեկանից գ/ տասնյոթ տարեկանից դ/ տասնութ տարեկանից
5	Ե՞րբ է ստեղծվել Սմբատ սպարապետի «Դատաստանագիրքը».	ա/ 1184 թ. բ/ 1265 թ. գ/ 1863 թ. դ/ 1266 թ.
6.	Կանոն բառը հունարեն է, որը նշանակում է.	ա/ եղեգի ցողուն, ուղիղ փայտ, սահմանագիծ բ/ ճշմարիտ խոսք, ուղիղ փայտ, հրաման գ/ եղեգի ցողուն, հրաման, անկյունագիծ դ/ սահմանագիծ, հրաման, ճկուն փայտ
7.	Նշվածներից ո՞րն է իրավունքի ներպետական աղբյուր Հայաստանում.	ա/ սանկցիա բ/ նորմատիվ իրավական ակտ գ/ համաձայնագիր դ/ զեկուցագիր
8.	Իրավաբանական փաստեր հաստատող պետական մարմին է	ա/ նոտարիատը բ/ փաստաբանական պալատը գ/ նոտարիատը և փաստաբանական

		պալատ դ/ ճիշտ պատասխանը բացակայում է.

9.	Անժառանգ գույքը անցնում է.	ա/ ժառանգության բացման վայրի համայնքին բ/ ժառանգության բացման գյուղապետարանին գ/ ժառանգության բացման քաղաքապետարանին դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
10.	Ամուսնությունը արգելվում է.	ա/ այն անձանց միջև, որոնցից մեկ արդեն այլ ամուսնության մեջ է գտնվում բ/ այն անձանց միջև, որոնք ամուսնալուծվել են գ/ այն անձանց միջև, որոնք քրեական պատասխանատվության են ենթարկվել դ/ այն անձանց միջև, որոնցից մեկն ամուսնալուծվել է
11.	Վերաքննիչ դատարանը չի ստուգում ստորադաս դատարանների կայացրած ակտերի՝	ա/ հիմնավորվածությունը բ/ բարոյականությունը գ/ արդարացիությունը դ/ օրինականությունը
12.	Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տեղակայված է.	ա/ Փարիզում բ/ Հաագայում գ/ Ստրասբուրգում դ/ Բրյուսելում
13.	Իշխանության ո՞ր ճյուղն է ընդունում և իրականացնում ենթաօրենսդրական ակտեր.	ա/ գործադիր իշխանությունը բ/ օրենսդիր իշխանությունը գ/ դատական իշխանությունը դ/ ճիշտ են բոլոր պատասխանները
14.	Ո՞րը պետական կառավարման ձև չէ.	ա/ խորհրդարանական հանրապետությունը բ/ նախագահական հանրապետությունը գ/ դաշնային հանրապետությունը դ/ կիսանախագահական հանրապետությունը
15.	Հայաստանի անկախության մասին հռչակագիրն ընդունվել է.	ա/1990թ. օգոստոսի 23-ին բ/1991թ.օգոստոսի 23-ին գ/1990թ.սեպտեմբերի 21-ին դ/1992թ.սեպտեմբերի 21-ին

16.	Ո՞ր հասկացությունն է նշանակում «պահպանողականություն».	ա/ կոնկլուդենտ բ/ կոսմոպոլիզմ գ/ կոնսերվատիզմ դ/ կոնգլոմերանտ
17.	Ե՞րբ է հռչակվել Հայաստանի առաջին հանրապետությունը.	ա/1918թ.մայիսի 28-ին բ/1919թ.մայիսի 28-ին գ/1920թ.մայիսի 28-ին դ/1917թ.մայիսի 28-ին
18.	Պանամայի ջրանցքը հազարավոր կիլոմետրերով կրճատում է ճանապարհը.	ա/Խաղաղ և Հնդկական օվկիանոսների ափերին գտնվող երկրների միջև բ/Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների ափերին գտնվող երկրների միջև գ/Հնդկական և Ատլանտյան օվկիանոսների ափերին գտնվող երկրների միջև դ/Հարավային և Ատլանտյան օվկիանոսների ափերին գտնվող երկրների միջև
19.	Ե՞րբ է ընդունվել «Մարդու իրավունքների և պարտականությունների ամերիկյան հռչակագիրը».	ա/ 1948թ. բ/ 1958թ. գ/ 1966թ. դ/ 1968թ.
20.	Արցախի նախարարական տան նախահայրը եղել է.	ա/ Առանշահիկը բ/ Վաչագան բարեպաշտը գ/ Առանը դ/ Եսայի Հասան Ջալալյանը
21.	Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին համաձայնագիրը.	ա/Ժնևի առաջին համաձայնագիրն է բ/Ժնևի չորրորդ համաձայնագիրն է գ/Հաագայի երրորդ համաձայնագիրն է դ/Հաագայի չորրորդ համաձայնագիրն է
22.	Պետության հատուկ ծառայություններից է.	ա/ ազգային անվտանգության ծառայությունը բ/ հարկային ծառայությունը գ/ մաքսային ծառայությունը դ/ դատական ծառայությունը
23.	Սահմանադրությունը որպես հիմնական օրենք ունի.	ա/ հիմնադիր և հիմնարար բնույթ բ/ կանխող և դաստիարակող բնույթ գ/ զրկող և պատժող բնույթ դ/ վերականգնող և հատուցող բնույթ

24	Օրենսդիր,գործադիր և դատական թևերի միջև իշխանությունների բաժանման սկզբունքն առաջարկել է.	ա/ Ի. Կանտը բ/ Շ.Մոնտեսքիոն գ/ Թ.Ջեֆերսոնը դ/ Կ.Մարքսը
25.	Ո՞րն է աշխարհում առաջին գրավոր օրենսգիրքը.	ա/ «Ռուսկայա պրավդան» բ/ «Սալյական դատաստանագիրքը» գ/ Համմուրապիի «Օրենքների ժողովածուն» դ/Մ. Գոշի «Գիրք դատաստանի» աշխատությունն
26.	5-րդ դարում Հայաստանը փոխառեց.	ա/ Լեհահայոց դատաստանագիրքը բ/ Ասորա-հռոմեական դատաստանագիրքը գ/ Աստրախանի հայերի դատաստանագիրքը դ/ Ճիշտ են ա և գ պատասխանները
27.	Իրավական կարգավորման հրամայողական կամ իմպերատիվ մեթոդը.	ա/կիրառվում է քրեական իրավունքի ճյուղում բ/կիրառվում է ընտանեկան իրավունքի ճյուղում գ/կիրառվում է զույքային հարաբերությունների կարգավորման ժամանակ դ/կիրառվում է սահմանադրական իրավունքի ճյուղում
28.	Կառավարության ընդունած որոշումը.	ա/ընդհանուր ենթաօրեսդրական ակտ է բ/գերատեսչական ենթաօրենսդրական ակտ է գ/լոկալ ենթաօրենսդրական ակտ է դ/տեղական ենթաօրենսդրական ակտ է
29.	Նախարարի հրամանը.	ա/ընդհանուր ենթաօրեսդրական ակտ է բ/գերատեսչական ենթաօրենսդրական ակտ է գ/լոկալ ենթաօրենսդրական ակտ է դ/տեղական ենթաօրենսդրական ակտ է
30.	Ո՞ր դատարանը կարող է քաղաքացիական գործերով հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը.	ա/ Վերաքննիչ բ/ Վճռաբեկ գ/ Սահմանադրական դ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը
31.	Ո՞վ է ընդունում օտարերկրյա	ա/ ՀՀ վարչապետը

	պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը.	բ/ ՀՀ նախագահը գ/ ՀՀ Ազգայինժողովը դ/ ՀՀ կառավարությունը
32.	Իրավունքի բոլոր ճյուղերի համար գերակայող աղբյուր է.	ա/ համապատասխան ճյուղի օրենսգիրքը բ/ սահմանադրությունը գ/ ընթացիկ օրենքները դ/ համապատասխան օրենքները
33.	Օրենքի միատեսակ կիրառումը.	ա/ վճռաբեկ դատարանի նպատակն է. բ/ վերաքննիչ դատարանի նպատական է գ/ սահմանադրական դատարանի նպատական է դ/ վարչական դատարանի նպատակն է
34.	Ո՞րը պետության արտաքին գործառույթ չէ.	ա/ երկրի պաշտպանության գործառույթը բ/ համաշխարհային իրավակարգի պահպանության գործառույթը գ/ սոցիալ-տնտեսական գործառույթը դ/ միջազգային,խաղաղության, անվտանգության ապահովման գործառույթը
35.	Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքները ձևավորվել են 18-րդ դարում.	ա/ Ֆրանսիայում և Անգլիայում բ/ Հյուսիսային Ամերիկայում և Անգլիայում գ/ Ֆրանսիայում և Հյուսիսային Ամերկիայում դ/ Անգլիայում և Գերմանիայում
36.	Ո՞ր դատարանը կարող է քաղաքացիական գործերով հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը.	ա/ Վերաքննիչ բ/ Վճռաբեկ գ/ Սահմանադրական դ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը
37.	Ոստիկանությունը.	ա/ գործադիր իշխանության համակարգի պետական կառավարման մարմին է բ/ դատական իշխանության պատկանող կառավարման մարմին է գ/ օրենսդիր մարմնի համակարգի պետական կառավարման մարմին է

		դ/ ղեկավարվում է ՀՀ վարչապետի կողմից
38.	Ե՞րբ է սկսվել Առաջին աշխարհամարտը.	ա/ 1914թ. բ / 1917թ. գ/ 1939թ. դ/ 1929թ.
39.	Քաղաքացիական պայմանագիրը.	ա/անուղղակի գործարքի տեսակ է բ/երկողմանի գործարքի տեսակ է գ/հասարակական գործարքի տեսակ է դ/գործարք չէ
40.	Կտակի բացակայության դեպքում գործում է.	ա/ ըստ օրենքի ժառանգությունը բ/ըստ տարիքի ժառանգությունը գ/ըստ արյունակցական կապի ժառանգությունը դ/ ըստ կտակի ժառանգությունը
41.	Պաշտպանի մասնակցությունը գործին սկսվում է գործի՝	ա/ նախնական քննության պահից բ/ հետաքննության պահից գ/ դատական նիստը սկսվելու պահից դ/ պաշտպանը չի մասնակցում գործին
42.	Քաղաքական կյանքի գործողությունը կարգավորվում է.	ա/ իրավական նորմերով բ/ քաղաքական նորմերով գ/բարոյական նորմերով դ/ բոլոր վերը նշվածներով
43.	Միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտը.	ա/ դուալիստական պետությունն է բ/ ազատական պետությունն է գ/ ինքնիշխան պետությունն է դ/ սոցիալական պետությունն է
44.	Եթե չկա ոչ կտակի և ոչ էլ ըստ օրենքի ժառանգներ, ապա գույքը ճանաչվում է.	ա/անտեր բ/անժառանգ գ/անհայտ դ/անպետք
45.	Միջազգային մարդասիրական իրավունքը երբեմն անվանում են.	ա/ «կյանքի իրավունք» բ/ «պատերազմի իրավունք» գ/ «հումանիստական իրավունք» դ/ ոչինչ էլ չեն անվանում
46.	Տրանսիլվանիան վիճելի տարածք է եղել.	ա/ Ռումինիայի և Բուլղարիայի միջև բ/ Հունգարիայի և բուլղարիայի միջև գ/ Ռումինիայի և Հունգարիայի միջև դ/ Ռումինիայի և Վալախիայի միջև
47.	Փաստաբանի որակ չէ.	ա/ քաղաքական արիությունը բ/ անկաշառությունը

		գ/ ազնվությունը դ/ սկզբունքայնությունը
48.	Հին Աթենքում ձայնի իրավունք չունեին.	ա/ չափահաս ազատ տղամարդիկ բ/ ստրուկները, ոչ քաղաքացի բնակիչները գ/ կանայք և անչափահասները դ/ ճիշտ են բ և գ պատասխանները
49.	«Չորրորդ իշխանություն» կոչում են.	ա/ թերթերը բ/ համացանցը գ/ լրատվության միջոցները դ/դատարանները
50.	Մարդու առաջին սերնդի իրավունքներն են.	ա/ հասարակական, տնտեսական և մշակույթայինը բ/ քաղաքացիականը և քաղաքականը գ/ համերաշխությանը դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
51.	Մարդու երկրորդ սերնդի իրավունքներն են.	ա/հասարակական,տնտեսական և մշակույթայինը բ/քաղաքացիականը և քաղաքականը գ/համերաշխությանը դ/ճիշտ պատասխանը բացակայում է
52.	Ե՞րբ է ընդունվել ԱՄՆ-ի անկախության հռչակագիրը.	ա/ 1689թ. բ/ 1787թ. գ/ 1776թ. դ/ 1789թ.
53.	«Կոնվենցիա երեխաների իրավունքների մասին» փաստաթուղթն ընդունվել է.	ա/ 1988թ. նոյեմբերի 20–ին բ/ 1989թ.նոյեմբերի 20–ին գ/ 1990թ. նոյեմբերի 20-ին դ/ 1987թ. նոյեմբերի 20-ին
54.	Ո՞ր տարիքի երեխաների մասնակցությունն է արգելվում ռազմական գործողություններին.	ա/ մինչև 15 տարեկան բ/ մինչև 15 տարեկան գ/ մինչև 16 տարեկան դ/ մինչև 18 տարեկան
55.	Հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը լուծում է.	ա/ առաջին ատյանի դատարանը բ/ վերաքննիչ դատարանը գ/ վճռաբեկ դատարանը դ/ սահմանադրական դատարանը
56.	Ֆեմիդան՝	ա/ հին հունական աստվածուհի է բ/ հին հռոմեական աստվածուհի է գ/ հին ուրարտական աստվածուհի է դ/ հին բաբելոնյան աստվածուհի է
57.	Ո՞րն (որո՞նք) է Սահմանադրական	ա/ ապահովում է Սահմանադրության

	դատարանի դերը պետական մարմինների («հակակշռողների և զսպող լիազորությունների» միջոցով) հավասարակշռման իրականացման գործում:	գերակայությունը բ/ ապահովում է մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանությունը գ/ ապահովում է մարդու բարեկեցությունը դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
58.	Քաղաքացիական գործով փոխառուն կոչվում է.	ա/ հայցող բ/ պատասխանող գ/ պահանջող դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
59.	Դատարանը պաշտպանում է.	ա/ տուժողի շահերը բ/ մեղադրյալի շահերը գ/ օրենքի շահերը դ/ ճիշտ են բոլոր պատասխանները
60	ՀՀ-ում մասնագիտացված դատարան է.	ա/ վերաքննիչ դատարանը բ/ վճռաբեկ դատարանը գ/ ընդհանուր իրավասության դատարանը դ/ վարչական դատարանը
Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ 2 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր:		
61.	Վերաքննիչ բողոք բերելուց հետո ընդհանուր իրավասության դատարանի ակտերի օրինական ուժի մեջ մտնելը՝	ա/ արգելվում է բ/ դադարեցվում է գ/ կասեցվում է դ/ չեղարկվում է
62.	Հրամայողական կամ իմպերատիվ մեթոդը կիրառելիս.	ա/ կողմերը չունեն վարքագիծ ընտրելու իրավունք բ/ կողմերը ունեն վարքագիծ ընտրելու իրավունք գ/ կողմերը կամայակոնորեն գործելու իրավունք ունեն դ/ կողմերը իրենք են որոշում իրենց վարքագիծը
63.	Ո՞ր իրավունքի նորմերը մշտապես ունեն հարկադրանք.	ա/ իրավապահպան և արգելող բ/ արգելող և պարտադրող գ/ իրավազորող և արգելող դ/ իրավազորող և պարտադրող
64.	Սահմանադրական իրավունքը.	ա/մասնավոր իրավունք է բ/հանրային իրավունք է գ/իրավունք չէ դ/ճիշտ պատասխանը բացակայում է

65.	Մասնավոր իրավունք է.	ա/ սահմանադրական իրավունքը բ/ վարչական իրավունքը գ/ քրեական իրավունքը դ/ քաղաքացիական իրավունքը
66.	Նշվածներից ո՞ր տարբերակում է իրավաչափ վարքագծի տեսակը համապատասխանում օրինակին	ա/ ցանկալի իրավաչափ վարքագիծ (ընտրել այլ դավանաք) բ/ ցանկալի իրավաչափ վարքագիծ (գիտական հայտնագործություն) գ/ պարտադիր իրավաչափ վարքագիծ (բանակում ծառայել) դ/ ցանկալի իրավաչափ վարքագիծ (խմբակի անդամակցելը)
67.	Դատական գործի քննության կարգի խախտումը քննում է.	ա/ սահմանադրական դատարանը բ/ վերաքննիչ դատարանը գ/ վարչական դատարանը դ/ վճռաբեկ դատարանը
68.	Քրեական գործերի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն է իրականացնում.	ա/ ընդհանուր իրավասության դատարանը բ/ վճռաբեկ դատարանը գ/ սահմանադրական դատարանը դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
69.	Ամերիա բանկի Ազատության փողոցի մասնաճյուղում օդորակչի անսարքության պատճառով գրանցվել է պլյուս 41°C ջերմաստիճան։ *Ի՞նչ տեսակի ընդմիջում կարող են պահանջել աշխատակիցները։*	ա/ լրացուցիչ ընդմիջում՝ առնվազն 20 րոպե բ/ հատուկ ընդմիջում՝ առնվազն 15 րոպե գ/ հատուկ ընդմիջում՝ առնվազն 30 րոպե դ/ չեն կարող ներկայացնել նման պահանջ
70.	Քաղաքացի Պետրոսյանը իր հայեցողությամբ որոշեց իր սեփականության մի մասը կտակել ընկերոջը՝ քաղաքացի Պողոսյանին։ Կտակը կազմվեց գրավոր։ Քանի որ քաղաքացի Պետրոսյանը (կտակարարը) ինքն անձամբ չէր կարող ստորագրել կտակը ծանր հիվանդության պատճառով (ձեռքերի կաթված) նա իր փոխարեն խնդրեց ստորագրել իր հարևանուհուն՝ Թովմասյանին։ Վերջինս ստորագրեց կտակարարի փոխարեն՝ նշելով իր անունն և բնակության վայրը։ Կտակը գրավոր կազմելուց մի քանի օր անց կտակարար Պետրոսյանը մահացավ։ Ժառանգության բացման օրը պարզվեց որ կտակը կազմելու ժամանակ թույլ են տրվել թերություններ։ Կտակում չեն նշվել այն պատճառները, որոնց ուժով կտակարարը անձամբ չի կարողացել ստորագրել կտակը։ *Ինչպիսի՞ հետևանքներ կարող է ունենալ կնքված կտակը.*	ա/ անվավեր է բ/ շինծու է գ/ կեղծ է դ/ ենթակա է վերաձևակերպման

Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ

Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյունակներում տրված հասկացությունների, երևույթների միջև:

Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո զետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը:

Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասանը՝ չորս միավոր:

71. Համապատասխանեցնել նեղուցը/ջրանցքը միացվող ծովերի կամ օվկիանոսների հետ.

1. Պանամայի ջրանցք	ա/ Հնդկական օվկիանոս և Խաղաղ օվկիանոս
2. Սուեզի ջրանցք	բ/ Ատլանտյան օվկիանոս և Խաղաղ օվկիանոսն
3.Մալակկայի նեղուց	գ/ Սև ծով և Միջերկրական ծով
4. Բոսֆորի նեղուց	դ/ Միջերկրական ծով և Կարմիր ծով

1	2	3	4

72. Համապատասխանեցնել եզրույթը բացատրությանը.

1. ռեստորացիա	ա/ ոչնչացված կամ վնասված գույքի փոխարինում
2.սատիսֆակցիա	բ/ նյութական վնասի հատուցում դրամական ձևով
3. սուբստիտուցիա	գ/ բավարարում իրավախախտ պետության կողմից
4. ռեպարացիա	դ/ նյութական օբյեկտի վիճակի վերականգնում

1	2	3	4

73. Համապատասխանեցնել պետությունները և դրանց միջև եղած վիճելի տարածքները.

1. Գոլանի բարձրունքներ	ա/ Հունգարիա և Ռումինիա
2. Սաարի մարզ	բ/ Իսրայել և Սիրիա
3. Սիլեզիա	գ/ Ֆրանսիա և Գերմանիա
4. Տրանսիլվանիա	դ/ Գերմանիա և Լեհաստան

1	2	3	4

74. Համապատասխանեցնել նորմերը դրանք ներկայացնող շահերին և կարգավորող հարաբերություններին.

1. Վարույթային իրավունքի նորմերը կարգավորում են	ա/ իրապես գոյություն ունեցող հարաբերությունները
2. Մասնավոր իրավունքի նորմերը կարգավորում է	բ/ պետության շահերը
3. Նյութական նորմերը կարգավորում են	գ/ ֆիզիկական անձանց շահերը և հարաբերությունները
4. Հանրային իրավունքի նորմերը կարգավորում և ապահովում են	դ/ զուտ ընթացակարգային հարցերը

1	2	3	4

LUMFC

75. Համապատասխանեցնել իրավունքի աղբյուրները.

1. Մահմեդական երկրներում առվել տարածված է	ա/ նորմատիվ իրավական ակտը
2. ՀՀ–ում իրավունքի հիմնական աղբյուրն է	բ/ նախադեպային իրավունքը
3. Անգլո–սաքսոնական երկրների իրավական համակարգին բնորոշ է որպես իրավունքի աղբյուր	գ/ սովորույթը
4. Հնագույն ժամանակներում հասարակական կյանքի կարգավորում էր	դ/ «Շարիաթը»

1	2	3	4

LUMFC